Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-704-26.01.2015-ՏՏ-010/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 29.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝

«29.1) սահմանում է այն շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, որտեղ իրականացվում են և (կամ) մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ:»:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4.2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«4.2) սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվություն.»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ
ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արաիկ Հովհաննիսյան	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում <ազգային> բառից հետո լրացնել <և կրոնական> բառերը:	Ընդունվել է:	Օրենքի նախագծում <ազգային> բառից հետո լրացվել է <և կրոնական> բառերը:
2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյան	Օրենքի նախագծի 1-ին հոդվածը լրացնել <մարմինը և (կամ) աճյունը> բառերով	Ընդունվել է:	Օրենքի նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝ <քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարություն՝ ազգային և կրոնական ավանդույթների համաձայն մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ մահացածի աճյունասափորը հողին հանձնելուց կամ աճյունասափորը հուշապատում տեղադրելուց առաջ հրաժեշտի արարողություն»